ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Արարատ, 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2026 թվականի N 0023-Ա

ԱՃՈՒՐԴԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի դրույթներով,հաշվի առնելով որ 2026 թվականի հունվարի 8-ին Արարատի համայնքապետարանում աճուրդ-վաճառքի ներկայացված, համայնքային սեփականություն հանդիսացող թվով 8 ավտոմեքենաների գնման նպատակով ոչ մի գնորդ չի ներկայացել,***որոշում եմ***.

1.2026 թվականի հունվարի 8-ին հայտարարված աճուրդը թվով 8 տրանսպորտային միջոցների մասով համարել չկայացած:
2.Հայտարարել նոր աճուրդ՝ 2026 թվականի փետրվարի 16-ին օրենքով սահմանված կարգով:
3.Օտարման մեկնարկային գին սահմանել «ՊԻՎԻԷՄ» և «ԱՐՄԷՔՍՊԵՐՏԻԶԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից տրամադրված գնահատման վերաբերյալ հաշվետվությունների համաձայն սահմանված արժեքի 50 տոկոսի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

13 հունվարի 2026 թ.
ք. Արարատ